**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»**
**փակ բաժնետիրական ընկերություն**

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80, կապի օպերատոր - (37410) 73 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№Է/40/2641-23 առ «27» 12 2023թ.

*(պայմանագիրը միակողմանի լուծելու մասին)*

«Ալեքս Պրո» ՍՊԸ
ՀՎՀՀ՝ 00483033
ՀՀ, ք. Երևան, Ռոստովյան 36/33
Հեռ. 095-98-89-91
Էլ. Փոստի հասցե՝ alexprollc1@gmail.com

# Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «Ալեքս Պրո» ՍՊԸ-ի միջև սույն թվականի հոկտեմբերի 4-ին կնքվել է «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-128/23-01/340» ծածկագրով սողնակների, կափույրների և փականների մատակարարման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, այսինքն պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Սույն թվականի նոյեմբերի 22-ին մասնակցին ուղարկվել է համաձայնագրի նախագիծը:

Համաձայն պայմանագրի 8.13 կետի՝ Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

Սահմանված ժամկետում «Ալեքս Պրո» ՍՊԸ-ի կողմից չի պահպանվել պայմանագրով սահմանված ժամկետում իր կողմից ստորագրված լրացուցիչ համաձայնագրի, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովման ներկայացման պահանջը, որի հետևանքով պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

Տեղեկացնում ենք, որ «Ալեքս Պրո» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում բենեֆիցիարի «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում բացված 1930000199200100 հաշվեհամարին փոխանցել տուժանքով սահմանված որակավորման ապահովման և պայմանագրի ապահովման գումարները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման

գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Միաժամանակ տեղեկացնում ենք, եթե սահմանված ժամկետում «Ալեքս Պրո» ՍՊԸ-ի կողմից վճարվի որակավորման ապահովման և պայմանագրի ապահովման գումարները, ապա՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի Պատվիրատուի կողմից չի կայացվի որոշում «Ալեքս Պրո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ: Նշված որակավորման ապահովման և պայմանագրի ապահովման գումարները անհրաժեշտ է վճարել բենեֆիցիարի «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում բացված 1930000199200100 հաշվեհամարին և վճարված կտրոնների բնօրինակները ներկայացնել «ՀԱԷԿ» ՓԲԸ գնումների ընթացակարգերի բաժին:

Հարգանքով՝

Գլխավոր տնօրենի տեղակալ –
ընդհանուր հարցերի գծով տնօրեն Ս. Մաթևոսյան

Կազմեց. ԳԸԲ գլավոր մասնագետ՝
Գ. Երիցյան
Հեռախոս՝ +37410200491